



ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԶԱՐՈՋ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունվարի 6-ին, երկուշաբթի, Մայր Աթոռում ավանդական շքով և հանդիսութեամբ տոնվեց Քրիստոսի հրաշափառ և Ս. Մննդյան տոնը:

Ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով, առաջնորդվեց Մայր Տաճար՝ Ս. Մննդյան պատարագը մատուցելու համար:

Մայր Տաճարը լիքն էր հավատացյալների և ուխտավորների բազմությամբ:

Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ էին գրավել Գերագույն Հոգեվոր Խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի, Արարատյան թեմի թեմական խորհրդի անդամները, Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և այլ անձնավորություններ:

Պատարագի ընթացքում Ս. Սեղանին սպասարկում էին գերաշնորհ Տ. Հայկազուն և Տ. Ասողիկ սրբազանները, հոգեշնորհ Տ. Մուշեղ, Տ. Խորեն, Տ. Արսեն, Տ. Նարեկ վարդապետները, սարկավազների և ուրարակիրների խումբը:

Մայր Տաճարի երգեցիկ խումբը, խմբավար Խորեն Հակոբյանի ղեկավարությամբ,

հանդիսավորապես երգում էր Կոմիտասի բառաձայն պատարագը:

«Տէր ողորմեա»-յից առաջ Վեհափառ Հայրապետը, Քրիստոսի հրաշափառ և Ս. Մննդյան ավետիսը տալով բովանդակ հայ հավատացյալ ժողովրդին, խոսում է հետևյալ բովանդակալից քարոզը, Մննդյան խորհրդով օծուն և խաղաղասիրական, հայրենասիրական ջերմ շնչով բաբախուն:

«Փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Այսօր երկինք և երկիր Աստուծո փառքը կերգեն, վասնզի ծնավ «Արեգակն արդարութեան» Քրիստոս, որ եկավ ավետելու՝ աշխարհաց խաղաղություն և ի մարդիկ հաճություն:

Երկինք և երկիր երբեք այնքան չեն մերժենար իրարու, ինչքան այսօր:

Երկինք և երկիր երբեք այնքան չեն հասկնար զիրար, ինչքան այսօր: Երկինքը այսօր երկիր կիջնե և երկիրը կդառնա երկինք:

Երկինքը, տիեզերքը համայն, խաղաղություն է, ներդաշնակություն և լույս: Քրիստոս, երկինքը ամբողջ իր հոգվովն մեջ առած, աշխարհ կիջնե այսօր, մարդոց հոգիներուն բաշխելու խաղաղություն, ներդաշնակություն և լույս:

Մարդկային աշխարհի մեջ, երկնային խաղաղությունը՝ խաղաղ գոյատևումն է և վարձացումը կյանքի ուժերուն, լույսը սերն է և հաճությունը ի մարդիկ, իսկ ներդաշնակությունը՝ արդարությունը:

Ահա խորհուրդը և իմաստը Զրիստոսի ծննդյան, Զրիստոսի մարդեղության գաղափարին: Ահա, թե ինչո՞ւ Հիսուս կոչվեցավ Փրկիչը ազգի մարդկան:

Զրիստոս թեև ծնավ միայն երկու հազար տարիներ առաջ, սակայն մինչ այդ տասնյակ դարեր շարունակ, մարդիկ իրենց աչքերը դեպի վեր, դեպի երկինք հառած հրաշք մը երազեցին, Փրկիչ մը սպասեցին, որ վիրենք ապատագրեր նյութին և մեղքին կապանքներեն, հոգեկան խավարեն և բարբարոս օրենքներեն: Զրիստոսի ծնունդը երկնքի պատասխանը եղավ մարդկության դարերու սպասումին: Այսպես ահա ծնավ և հայտնեցավ Զրիստոս և ապա հարյավ, որպեսզի հավետ կենդանի մնա: Մարդկությունը սրբապան տենչը ունի իր հոգիին մեջ հավետ կենդանի պահելու վճարատո՞ւ՝ ավետաբերը խաղաղության, սիրո և արդարության:

Ահա, թե ինչո՞ւ ամեն տարի, աշխարհի բոլոր հորիվոններուն տակ, բոլոր լեզուներով, հուսացյալ մարդիկ ցնծությամբ կտոնեն ծնունդը Զրիստոսի և հաղթական կերպով՝

«Փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Եվ այսօր ալ, աշխարհը աշխարհ է, մարդիկ մարդեր են և կյանքի ճանապարհը՝ թե՛ լույս, թե՛ խավար, երբեմն մահվան վտանգներով լեցուն:

Մեր օրերուն ևս, ավա՞ղ, մարդկությունը տակավին չէ գտած իր կյանքի լուսավոր ու խաղաղ ուղին:

Ատոմական այս դարաշրջանին, աշխարհը ամբողջ և ազգերը համայն, սպառնալիքին ներքև կգտնվին իսպառ բնաջնջումի, ոչնչացումի: Եվ հաճախ մարդ ակամա հարց կուտա իրեն՝ արդյո՞ք ա՛յս պետք է ըլլար հետևանքը մարդկության հառաջդիմության, արդյունքը գիտության և մշակութի վարձացման: Ինչպե՞ս է որ կան տակավին մեր երկրագնդի վրա կույր ուժերը չարին, ճարտարապետներ ավերակներու և մահ երազողներ:

Տխուր է և վհատեցուցիչ այս իրողությունը հաստատել: Մեր կյանքի խավարն է այդ:

Սակայն այս իրողության դեմ հանդիման, կա ավելի մեծ և սփոփարար իրողություն մը, խաղաղության տենչն ու կամքն է այդ համայն մարդկության, բոլոր ազգերու լայն վանգվածներուն: Մեր կյանքի լույսն է այդ: Եվ մեզի, քրիստոնյաներու համար, այդ լույսը մարդոց ու աշխարհին բաշխողը Ինքը մեր Փրկիչն է Զրիստոս, Իր Ս. Ավետարանով: Զրիստոս՝ «Իշխան խաղաղութան», լույսն է աշխարհին:

Հայաստանայց Եկեղեցին և հայ ժողովուրդը միշտ աղոթած են և պիտի աղոթեն ու գործեն, որպեսզի ատելությունը և մոլեռանդությունը, նախանձը և ագահությունը արմատախիլ ըլլան մարդկային կյանքի անդաստանեն, որպեսզի փշովին պատերազմի ամեն տեսակի վեճերը, ընդհանուր զինաթափությամբ բոլոր պետություններուն, որպեսզի ժողովուրդներու փոխհարաբերությանց մեջ տիրե արդարության և համերաշխ գոյակցության ոգին, որպեսզի այս նույն արևին տակ, ապահովվի մարդոց և ազգերուն բոլոր՝ կյանքի անվտանգություն և ապատություն և տևական խաղաղություն:

Մենք կհավատանք լույսի ուժերու հաղթանակին, մենք կհավատանք աշխարհի խաղաղության գաղափարի հաղթանակին: Եվ մեր հավատքը այսօր առավել կկորանա ու կպայծառանա, երբ մենք կտոնենք հրաշալի ծնունդը և հայտնությունը մեր Տիրոջ և Փրկչին՝ Հիսուսի Զրիստոսի:

Մարդոց հոգիներեն ներս այսօր առավել կաճի բարիքի ոգին, լույսը հոգիին. Զրիստոսով պորացած, Զրիստոսով միշտ հաղթական: Մենք միխթարված ենք նաև այն իրողությամբ, որ պետությունները և անոնց մարդասեր ու լուսամիտ առաջնորդները, հետզհետե առավել ականջ կդնեն ժողովուրդներու արդար իղձերուն և հետզհետե առավել պաշտպան կհանդիսանան զինաթափման և խաղաղ գոյակցության սկզբունքին: Մենք միխթարված ենք մանավանդ, որ մեր մեծ հայրենիքը՝ Խորհրդային Միությունը, իր բարոյական և նյութական ամբողջ հպորությամբ, այսօր դրոշակակիրն է աշխարհի կայուն և տևական խաղաղության փրկարար գաղափարին:

Խաղաղության և սիրո լույս կհայցենք մեր Մայր Եկեղեցիին և մեր ժողովուրդի կյանքին, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Եղբայրական սիրով, խաղաղ և շինարար միաս-

նական աշխատանքով միայն, մենք, փոքր ածու, պիտի կարողանանք մեր հին վերքերը բուժել և ավելի պորացնել ու շենցնել մեր Եկեղեցին, ավելի բարձրացնել քրիստոնեական աշխարհին մեջ անոր հոգևոր-բարոյական հեղինակությունը, և ավելի ամրապնդել մեր ազգի եկեղեցական, կրթական ու մշակութային պահպանության և վարճացման սրբական գործը ի սփյուռս աշխարհի ցիր ու ցան ապրող Մեր պանդուխտ վաճակներու կյանքին մեջ:

Մեկ և անբաժան Հայ Եկեղեցի, եղբայրական սեր և միասնական գործակցություն մեր նվիրապետական Աթոռներու միջև, կենդանի և առողջ պահպանելու համար արտասահմանի մեր ժողովուրդը իր կրոնական ու հայկական հոգիով, ահա՛ նվիրական ու փրկարար գործը, որ դրված է մեր առաջ, մեր ժամանակաշրջանին: Ահա՛ սրբական առաքելությունը մեր Եկեղեցիին, այսօր և գալիք տարիներուն, մինչև այն երջանիկ օրը, երբ պիտի իրականանա մեր ազգի դարավոր երազը՝ ամբողջական հայությունը իր հայրենի հողի վրա մեկտեղված:

Ահա՛ բուն իմաստը այն ողջագործումին, որ տեղի ունեցավ 26 հոկտեմբերին Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի կամարներուն տակ, Մեր և Մեծի Տանն Կիլիկիո Գահակալին՝ Նորին Սրբություն խորեն Ա. Կաթողիկոսի միջև:

Վերջ գտավ մեր Եկեղեցիին բաժանյալ և պառակտյալ վիճակը, վերջ գտան անհասկացողությունները, որ ծայր տված էին 1956-են ի վեր, անբնական ու վնասակար կացություն մը ստեղծելով արտասահմանի հայ եկեղեցական-ազգային կյանքեն ներս:

Մեր հոգիին մեջ պայծառ ստուգությունը ունինք, թե Մենք և խորեն Կաթողիկոս ամուր կանգնած պիտի մնանք, միասնաբար մեր Եկեղեցիին ու ժողովուրդին ծառայելու մեր ուխտին վրա, և մեր խոսքով ու գործով և մեր իշխանությամբ, նույն ոգին պիտի տարածենք ու պիտի հաստատենք մեր շուրջ ամեն տեղ:

Հայ Եկեղեցին վերագտած է իր ներքին պորությունը և ապահովությունը, վերագտած է իր ինքնավստահությունը և իր առաքելության հստակ գիտակցությունը:

Ամբողջ և անխռով է այլևս մեր Եկեղեցին, միասնական են մեր նվիրապետական Աթոռները, աստվածային օրհնության ներքև, որ բոլոր մեր Աթոռներուն և եկեղեցիներուն և հավա-

տացյալներուն կբաշխվի Փրկչի Իջման Ս. Սեղանեն, Լուսավորչի կանթեղեն:

Թող Տերը հաստատ և շեն պահե Իր իսկ հիմնած Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, թող Տերը հաստատ և շեն պահե Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը, Հայոց Առաքելական Ս. Աթոռը Երուսաղեմի և Հայոց Պատրիարքական Աթոռը Թուրքիո:

Քրիստոսի Ս. Ծննդյան ավետիսով ուրախ և երջանիկ, մեր սուրբ հավատքի լուսո խորան Ս. Էջմիածնեն, անխառն սիրով կողջունենք Մեծի Տանն Կիլիկիո շնորհապարզ խորեն Կաթողիկոսը, Երուսաղեմի ամենապատիվ Եղիշե սրբական պատրիարքը և Կոստանդնուպոլսո ամենապատիվ Շնորհք պատրիարքը, մաղթելով Մեր գահակալ եղբայրներուն արևշատություն և աստվածային օգնականություն իրենց սուրբ առաքելության ճանապարհին վրա:

Կաղոթենք նաև մեր Եկեղեցվո բոլոր բարեջան սպասավորներուն և համայն մեր հավատացյալ ժողովուրդին համար, որպեսպի Աստված Իր հովանին տարածյալ պահե անոնց վրա և պահպանե վանոնք խաղաղության և բարության մեջ, անփորձ ու անվտանգ:

Աղոթող ենք նաև, որ ամբողջ աշխարհի խաղաղության և ժողովուրդներու կայուն բարեկամության պայմաններու մեջ, անվրդով ապրի ու վարճանա մեր Մայր Երկիրը՝ Հայաստան աշխարհ, որ իր վերածնունդով նոր դարաշրջան մը բացավ հայոց փոթորկահույզ պատմության մեջ, դարաշրջան մը ապահովության, աննախընթաց վերաշինության և ազգային մշակույթի ծաղկումի:

Փա՛ռք Ս. Ծննդյան և Աստվածահայտնության Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի:

Փա՛ռք աստվածառաք Փրկչին, խաղաղության իշխանին:

Փա՛ռք Հայաստանյայց Ս. Եկեղեցիին:

Ս. Ծննդյան այս սուրբ պատարագի պահուն, Մեր աղոթքը կբարձրանա նաև ձեզի բոլորիդ համար, սիրեցյալ և հարապատ հավատացյալ վաճակներ Մեր:

Կողջունենք և կօրհնենք զձեզ բոլորդ Ս. Ծննդյան տոնի շնորհներով և կմաղթենք բոլորիդ բարի ու խաղաղ նոր տարի, ձեր եկեղեցաշեն ու հայրենանվեր գործոց հաջողությամբ:

«Մեր և խաղաղութիւն Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ: Ամեն»:

Վեհափառ Հայրապետի քարոզը նույն գիշեր ձայնասփռվում է Երևանի արտասահմանյան հաղորդումների ժամանակ:

Վեհափառ Հայրապետի հոգեշունչ սուլն քարոզից հետո, սուրբ պատարագը նույն հանդիսությամբ և վեհությամբ շարունակվում է:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Ավագ Սեղանի բեմի առաջ, կատարվում է Զրորհների սրբազան արարողությունը, ի հիշատակ Քրիստոսի մկրտության Հորդանան գետում, Հովհաննես Մկրտչի ձեռքով:

Վեհափառ Հայրապետն ընթերցում է Ս. Բարսեղ Կեսարացու Զրորհնյաց մեծ աղոթքը:

Մայր Տաճարում, հոգեշունչ և դաշն, հնչում են Մկրտության գեղեցիկ տաղերը՝ «Ով զարմանալի խորհուրդ» և «Այսօր ձայնն հայրական»:

Հավատացյալները ջերմեռանդությամբ վերցնում են Քրիստոսի մկրտության ջրից, հոգեպես պայծառացած նաև տոնի խորհրդով և ավետիսով:

Զրորհների ավարտին, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան՝ ընդունելու պաշտոնական շնորհավորությունները Ս. Ենիգյան տոնի ուրախ առիթով:

Ընդունելության վերջում Վեհափառ Հայրապետը օրհնում է ազգն ու Եկեղեցին, հայրե-

նիքն ու ժողովուրդը և մաղթում աշխարհին կայուն և մշտատև խաղաղություն և մարդկանց՝ ազգերի համերաշխություն:

Երեկոյան ժամը 3-ին, Վեհարանի սեղանատանը, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, ձեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և այլ անձնավորություններ սեղանակից են լինում Վեհափառ Հայրապետին:

Վեհափառ Հայրապետի նոր տարին շնորհավորում է Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը:

Ընդունելության ժամանակ ելույթ են ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ Գերատարապետ Միքայել Մազմանյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիսյանը, Արարատյան թեմի թեմական խորհրդի անդամ Ս. Արևշատյանը և ուրիշներ:

Ընդունելության գեղարվեստական բաժնի իրենց մասնակցությունն են բերում հոգեշնորհ Տ. Խորեն և Տ. Արսեն վարդապետները, Մայր Տաճարի երգչախմբի մեներգչուհի Սվետլանա Զաքարյանը և դաշնակահար Լևոն Աբրահամյանը:

Ընդունելությունը վերջ է գտնում Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

